ՊԱՇՏՈՆ	Վարկերի մոնիթորինգի բաժնի մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	09/05/24թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Վարկերի մոնիթորինգի բաժնի մասնագետ ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Խոշոր հաճախորդների ընթացիկ վիճակի մոնիթորինգ,
- Սահմանված պայմանների /կովենանտների/ կատարման ստուգում;
- Տարբեր հարթակներով ուսումնասիրություն փոփոխությունների ու բացասական ազդակների հայտնաբերման նպատակով,
- Ֆինանսական տվյալների պարբերական ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն /կորպորատիվ հաճախորդների գծով/,
- Այցելություն գործունեության վայր /կորպորատիվ հաճախորդների գծով/, և/կամ հեռախոսազանգի միջոցով ստուգման իրականացում՝ ըստ անհրաժեշտության,
- Հաշվետվության կազմում և ներկայացում անմիջական ղեկավարին

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն Տեխնիկական կամ տնտեսագիտական բարձրագույն կրթություն
- Աշխատանքային փորձը ցանկալի է՝ համապատասխան կամ հարակից ոլորտներում
- Ֆինանսական վերլուծության բազային գիտելիքներ
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Excel-ի լավ իմացություն,
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի լավ իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Վերլուծություններ և հետազոտություններ իրականացնելու հմտություններ
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Հաղորդակցման և թիմում աշխատելու հմտություններ
- Խնդիրների արագ ու արդյունավետ լուծման կարողություններ

- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://idbank.am/